

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/25**

ք. Երևան

« 11 » 03 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա Երեվան» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Վահե Գրարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք. Երևան, Բայրոնի փող. 3
ՀՎՀՀ 01557589
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570003667300100



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

		Ծառայության				մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ ըրաակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130/1	Ավտոմեքենաների ընթացիկ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ, այդ թվում 4 ավտոմեքենա /Toyota CAMRY 2,5L 2B(Comfort)/: Առավել մանրամասն նկարագրերը ներկայացված են հավելված 1.1-ում:	դրամ	600000	1	Ք. Երևան, Բայրոնի փ.3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2020թ.
- Պայմանագիրը պետք է կնքվի 600 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որի շրջանակներում մասնավոր կնարուցի ծառայություններ, իսկ վճարումները կկատարվեն փաստացի կատարվածի դիմաց՝ ըստ ներկայացված հաշիվների:							

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
 ՀՎՀՀ 00008519
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011020089
 ՀՀ ԱԺ աշխատակազմի
 ղեկավար՝ գլխավոր քարտուղար՝
 Տիգրան Գալստյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
 ք. Երևան, Բայրոնի փող. 3
 ՀՎՀՀ 01557589
 Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ 1570003667300100



Ձեռքբերվող ծառայության նկարագիր*		
NN	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	5-տնելանոց մարդատար ա/մ Toyota Camry 2.5L B2, 2018թ. պրտադրության
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	ՀՀ Դրամ
1	Բնկման համակարգի նտուգում	
2	Ստոնցման համակարգի ստուգում	
3	Յուրման համակարգի ստուգում	
4	Արտացման համակարգի ստուգում	
5	Կցորդման համակարգի ստուգում	
6	ՓՏ ի աշխատանքի ստուգում	
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	
10	Արձևի և հետևի կանխյանների աշխատանքի ստուգում	
11	Արձևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	
12	Արձևակային համակարգի աշխատանքի ստուգում	
13	ABS համակարգի ստուգում	
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	
16	Թափքի վիճակի ստուգում	
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	
18	Շարժիչի հանում տեղադրում	
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիստ) դեպքում	
20	Նույնը կոնիցիոնների դեպքում	
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
22	Շարժիչի վերականգնում	
23	Նույնը DOHC դեպքում	
24	Նույնը V6-ի դեպքում	
25	Շարժիչի բարձրիկ հանում և տեղադրում	

26	Բ/լիտեր կախարիչի հանում և տեղադրում	
27	Նույնը աջի համար (V6)	
28	Նույնը ձախի համար (V6)	
29	Շարժիչի բրկի գլխիկի հանում և տեղադրում	
30	Նույնը աջի համար (V6)	
31	Նույնը ձախի համար (V6)	
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	
34	Փակվանի խցուկի փոխարինում	
35	Նույնը V6-ի դեպքում	
36	Բաշխիչ լիտերի հանում և տեղադրում	
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	
38	Նույնը V6-ի աջի դեպքում	
39	Նույնը DOHC դեպքում	
40	Բաշխիչ լիտերի խցուկի փոխարինում	
41	Հրիչների փոխարինում SOHC	
42	Նույնը DOHC դեպքում	
43	Ատամնավոր փակի փոխարինում	
44	Նույնը DOHC դեպքում	
45	Նույնը V6-ի դեպքում	
46	Ծնվածն լիտերի առջև խցուկի փոխարինում	
47	Նույնը փոփոխիչների դեպքում	
48	Նույնը DOHC դեպքում	
49	Նույնը փոփոխիչների դեպքում	
50	Նույնը V6-ի դեպքում	
51	Նույնը փոփոխիչների դեպքում	
52	Ծնվածն լիտերի հետևի խցուկի փոխարինում	
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	
54	Մտրցային օդակների փոխարինում	
55	Նույնը DOHC դեպքում	
56	Նույնը V6-ի դեպքում	
57	Թափանցիկ հանում և տեղադրում	
	2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Ցուրի և յուղի գտիչի փոխարինում	
59	Ցուրի փռանի փոխարինում	
60	Նույնը DOHC դեպքում	
61	Նույնը V6-ի դեպքում	
62	Ղեկավարման զրկի վերանորոգում	
63	Բոմպան կարգավորում	
64	CO կարգավորում	
65	Խառնարակի հանում և տեղադրում	

66	Խաբնաբանված վերանորոգում	
67	Օդի զտիչի փոխարինում	
68	Ինժեկտորի ֆորսումպաների փոխարինում	
69	Ինժեկտորի ֆորսումպաների մաքրում	
70	Բենզամոլիջի փոխարինում	
71	Վառելիքի գտիչի փոխարինում	
72	վառման բաքի հանում և տեղադրում	
73	Տրանսլորի հանում և տեղադրում	
74	Տրանսլորի վերանորոգում	
	3. Սառնեցման և արտաձման համակարգ	
75	Հովիտի փոխի հանում և տեղադրում	
76	Հովիտի հանում և տեղադրում	
77	Ռադիատորի հանում և տեղադրում	
78	Նոյնը կոնդիցիոների դեպքում	
79	Նոյնը ԱՓՏ-ի դեպքում	
80	Ռադիատորի վերանորոգում	
81	Ծեղոնաատար փոխարինում	
82	Ջրի արմարի փոխարինում	
83	Նոյնը DOHC և V 6 դեպքում	
84	Նոյնը կոնդիցիոների դեպքում	
85	Ջրի արմարի վերանորոգում	
86	Նոյնը DOHC դեպքում	
87	Նոյնը կոնդիցիոների դեպքում	
88	Ընդարձակող բաքի փոխարինում	
89	Խլարարի հանում և տեղադրում	
90	Նոյնը DOHC դեպքում	
91	Ռադիատորի փոքրակի հանում և տեղադրում	
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92	Բանակամ գլխ գլանի հանում և տեղադրում	
93	Բանակամ գլխ գլանի վերանորոգում	
94	Կցորդան սկավառակների և ստանցքակախ փոխարինում	
95	Կցորդան ստանցքի հանում և տեղադրում	
96	Կցորդան ճոպանի հանում և տեղադրում	
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	
98	ՓՏ-ի վերանորոգում	
99	ՓՏ-ի ստանցքակախի փոխարինում	
100	ՓՏ-ի պայտանի հանում և տեղադրում	
101	Վարքայափի շարժարձեր փոխարինում	
102	ԱՓՏ-ի կոնվերտորի հանում և տեղադրում	
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	

104	Նոյնը V6-ի համար	
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	
106	Նոյնը V6-ի համար	
107	ԱՓՏ-ի վերանորոգում	
108	Նոյնը V6-ի համար	
109	ԱՓՏ-ի յուղի գտնիչ փոխարինում	
	5. Բաշխիչ տուփ, կարդանային խնե	
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	
113	Կարդանային խնեի հանում և տեղադրում	
114	Կարդանային խնեի խաչուկի հանում և տեղադրում, վերանորոգումով	
115	Կարդանային խնեի խաչուկի հանում և տեղադրում	
116	Կարդանային խնեի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	
118	Առջևի կամ հետևի կամրջակի լրակատար քանդում և հավաքում	
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում	
121	Կիսատնու առանցքակալի փոխարինում	
	7. Կախոց	
122	Առջևի կախոցի լրակատար քանդում և հավաքում	
123	Տրամբրի հանում և տեղադրում	
124	Չախ կամ այ հորակալի հանում և տեղադրում	
125	Անվակնուղի առանցքակալի փոխարինում	
126	Նոյնը հեղին տանող ա/մ-երը համար	
127	Հետևի անվակնուղի առանցքակալի փոխարինում	
128	Նոյնը հեղին տանող ա/մ-երի համար	
129	Չախ կամ այ հորակալի խցուկների փոխարինում	
130	Չախ կամ այ հորակալի առանցքակալների փոխարինում	
131	Ցնցամեղիջի թասանի փոխարինում	
132	Չախանակի հանում և տեղադրում	
133	Չախանի հանում և տեղադրում	
134	Չախակի կոամեների փոխարինում	
135	Առջևի ցնցամեղիջի հանում և տեղադրում	
136	Ներքևի լծակի կոամեների տեղադրում	
137	Ներքևի լծակի վոսանների փոխարինում	
138	Առջևի այ կամ ձախ ձգանտերի հանում և տեղադրում	
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	
140	Ճոհմանակալի լծակի հանում և տեղադրում	
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	

142	Վերևի թանի վրանների փոխարինում	
143	Գնդե հողակապերի փոխարինում	
144	Ծայրակամների հանում և տեղադրում	
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	
146	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	
147	Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում	
148	Հետևի գրպանակի փոխարինում	
149	Հետևի ցեցամեղմիչի հանում և տեղադրում	
150	Հետևի ծգածողի հանում և տեղադրում	
151	Հետևի նրկաթածողի հանում և տեղադրում	
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	
153	Հետևի անկյունագծային թակի հանում և տեղադրում	
154	Անկյունագծային թակի վրանների փոխարինում	
155	Անկարացքի կարգավորում	
156	Չողման ածխատանքներ 1 քառ.սմ համար	
8. Դեկային մեխանիզմ		
157	Դեկային կարմերի հանում և տեղադրում	
158	Նույնը V6-ի համար	
159	Դեկային կարմեր վերանորոգում	
160	ԴԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում	
161	ԴԿ-ի հորդակների հանում և տեղադրում	
162	Հորդոժեղարարի պոմպի հանում և տեղադրում	
163	Նույնը DOHC դեպքում	
164	Հորդոժեղարարի փոկի հանում և տեղադրում	
165	Նույնը DOHC դեպքում	
166	Հորդոժեղարարի փոխարանի հանում և տեղադրում	
167	Նույնը DOHC դեպքում	
168	Նույն կողիցիոնների դեպքում	
169	ՀՈՒ ԴԿ-ի հանում և տեղադրում	
170	ՀՈՒ ԴԿ-ի վերանորոգում	
9. Արգելակային համակարգ		
171	Գլխ-գլանի հանում և տեղադրում	
172	Գլխ-գլանի վերանորոգում	
173	Վախումային ուժեղարարի հանում և տեղադրում	
174	Բաժվ. գլանի հանում և տեղադրում	
175	Բաժվ. գլանի վերանորոգում	
176	Արգելակային համակարգի օրահանում	
177	Առջևի ստապուտի հանում և տեղադրում	
178	Հետևի ստապուտի հանում և տեղադրում	
179	Առջևի ստապուտի վերանորոգում	
180	Հետևի ստապուտի վերանորոգում	

181	Արգելակային փոխարանի փոխարինում	
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	
184	Հետևի կոճղակների փոխարինում	
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	
187	Արգելակային սերմակի հանում և տեղադրում	
188	ABS-ի հանում և տեղադրում	
189	ABS-ի վերանորոգում	
190	ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	
	10. Էլեկտրասարքավորում	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	
194	Գնձեռատորի հանում և տեղադրում	
195	Լույսեր V6-ի դեպքում	
196	Նույնը հիդրոտուճեղարարի դեպքում	
197	Գնձեռատորի վերանորոգում	
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	
199	Մեկնարկիչի վերանորոգում	
200	Առջևի լայտերի հանում և տեղադրում	
201	Հետևի լայտերի հանում և տեղադրում	
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	
203	Վազբաշտի հանում և տեղադրում	
204	Վազբաշտի ճուպանի հանում և տեղադրում	
205	Սարքերի պաննայի հանում և տեղադրում	
206	Արագաչակի հանում և տեղադրում	
207	Սզղանշանի հանում և տեղադրում	
208	Սզգանվակիչի շարժիչի հանում և տեղադրում	
209	Դինների կենտրոնական գրանցի հանում և տեղադրում	
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	
211	Մագնիստային տեղադրում	
212	Վարողքային լարերի հանում և տեղադրում	
213	Էլ/հատրդդակարների մասնակի վերանորոգում	
214	Էլ/հատրդդակարների հիմնական խաղցի հանում և տեղադրում	
215	Էլ/հատրդդակարների երկրորդային խաղցի հանում և տեղադրում	
216	Էլեկտրական սովիչների փոխարինում	
217	Էլեկտրական անջատիչները փոխարինում	
218	Վարողքի մասերի փոխարինում	
219	Կոնդիցիոների միջքավորում	33 000
220	Կոնդիցիոների վերանորոգում	

11. Այլ ծախսեր		
221	Ավտոմեքենայի բախիքի երկուսն և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար	
222	Ավտոմեքենայի լիցքավորում	1 100
223	Անիվի հանում և տեղադրում	
224	Անվաղորդի վերանորոգում	2 200
225	Անիվի բալանասավորում	
226	Անիվի վալց	
227	CO գոլումն աշխատանքներ, գին 1 քառ.դմ-ի համար	
228	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	
229	Փակվանագրծի աշխատանքներ, գին 1ժ համար	
230	Քարշակի ծախսեր գին 1լմ, համար	
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
1. Շարժիչ		
1	Շարժիչի բլոկ	
2	Շարժիչի գլխիկ	
3	Բարձիկ	
4	Շարժիչի գլխակի միջադիր	
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	
6	Շարժիչի բաշխիչ իսեռ	
7	Շարժիչի փակման րոլուս մղող	
8	Շարժիչի փակման ներս մղող	
9	Շարժիչի փակմանի խցով	
10	Ծնկամն իսեռ	
11	Ծնկամն իսեռի խցով արջկի	
12	Ծնկամն իսեռի խցով ինուն	
13	Ծնկամն իսեռի արևառական ներդիրներ	
14	Ծնկամն իսեռի շարժախալին ներդիրներ	
15	Հենակային տավորակ	
16	Մխոց	
17	Մխոցային օղակներ	
18	Ատամանիկ	
19	Ատամանավոր փոխ	
20	Շղթա	
21	Հորրոճգան	
22	Հոլիչ	
23	Հրիլոտորիչ	
24	Բանջակ	
25	Հանգստարար	
26	Թափանիկ	

27	Թափանցիկ արակ		
28	Խցուկ բաշխիչ լիսեռի		
29	Շկիվ		
30	Շարժաթև		
31	Կարտերի միջատիր		
32	Սիջատիր		
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
33	Յուղ շարժիչի հանքային, 1լիտր		
34	Յուղ շարժիչի կիսաանթետիկ, 1լիտր		6050
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր		5 500
36	Յուղի գտիչ		
37	Յուղի պոմպ		
38	Յուղի պոմպի շարժարներ		
39	Յուղի ուսդիատոր		
40	Յուղի փողրակ		
41	Յուղի ծորակ		
42	Վառոցքի մոմ		9 350
43	Բենզոլաք		
44	Խամանրակ		
45	Խամանրակի վերանորոգման հավաքածու		
46	Ինժեկտորի ֆորտունկա		
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական		
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական		
49	Վառելանյութի գտիչ		60 500
50	Վառելանյութի գտիչի ստոր մաքրման		
51	Վառելանյութի փողրակ		
52	Աքսելերատորի ճրպան		
53	Օդի գտիչ		16 500
54	Քնդամաղձանային տվիչ		
55	Յուղի տվիչ		
56	Բաշխիչ լիսեռի տվիչ		
57	Օդի ծախսի տվիչ		
58	Արագացարի տվիչ		
59	Հովանի տվիչ		
60	Ֆոնի տվիչ		
61	Բենզոլաքի տվիչ		
62	Մարման ընթացքի տվիչ		
63	Մարման ընթացքի տվիչ		
64	Ղեկավարման համակարգիչ		
65	Պարուպ ընթացքի տվիչ		
66	Դոստեյային սնակների տվիչ		

67	Թբլածնի տնիս		
3. Ստանցման և արտածման համակարգ			
68	Հովհարի փոկ		71 500
69	Հովհար		
70	Ուադիատոր		
71	Ուտարձակող բար		
72	Ուարիատորի փողոսակ		
73	Թերևստատ		
74	Ջրի արմար թևակ		
75	Ջրի արմարի առանցքակալ		
76	Ջրի արմար թևակ		
77	Ստանցման հերթակ 1 լիտր		6 600
78	Ջրի արմարի տնանիվ		
79	Հողովակ		
80	Փոկ		40 700
81	Փոկ կոնիցիոնորի		
82	Ծորակ		
83	Խլարարի ներդիր		27 500
84	Խլարարի կախոց		26 400
85	Կրոնշտեյն		16 500
86	Մետր (համուտ)		
87	Խլարար		1 155 000
88	Ռեդրնատոր		
89	Կարտրանի ռադիատոր		
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդան բանվորական գլան		
91	Կցորդան գլանավոր գլան		
92	Կցորդան գլանի վերանորոգման հավաքածու		
93	Կցորդան տանող սկավառակ		
94	Կցորդան տարվող սկավառակ		
95	Կցորդան առանցքակալ		
96	Կցորդան փողոսակ		
97	Փոխանցման տուփ		
98	ՓՏ-ի առջևի խցով		
99	ՓՏ-ի հետևի խցով		
100	ՓՏ-ի առանցքակալ		
101	ՓՏ-ի առաջնային լիստ		
102	ՓՏ-ի միջանկյալ լիստ		
103	ՓՏ-ի եղանիվ		
104	ՓՏ-ի արտանանիվ		
105	Համաձայն		

106	Մուֆտ		
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		
108	ԱՓՏ-ի գտիչ	36 300	
109	ԱՓՏ-ի սկավառայինների հավաքածու		
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ		
111	Տրանսիսիոն յուղ, 1 լիտր	8 800	
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր	8 800	
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ		
114	Հերմետիկ		
	5. Բաշխիչ տուփ, կարրանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ		
116	Բաշխիչ տուփի խցով		
117	Բաշխիչ տուփի առանցքակալ		
118	Բաշխիչ տուփի առանձնանիվ		
119	Բաշխիչ տուփի լիսեռ		
120	Կարրանային լիսեռ		
121	Էլաստիկ մուֆտ		
122	Կարրանային լիսեռի միջանկյալ հենակ		
123	Կարրանային լիսեռի խաչովի		
	6. Առցկի կամ հեռակի կամրջակներ		
124	հեռակ կամ առցկի կամրջակ		
125	Ուերովտոր		
126	Գլխավոր փոխանցման առանձնանիվների կոմպլեկտ		
127	Դիֆֆերենցիալ		
128	Դիֆֆերենցիալի ստունլիտ		
129	Տանդ առանձնանիվի խցով		
130	Տանդ առանձնանիվի առանցքակալ		
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ		
132	Կրաստնի		
133	Կրաստնու առանցքակալ		
134	Կրաստնու միջադիր		
135	Կրաստնու խցով		
136	Կարգավորիչ տափուղակ		
	7. Կախոց		
137	Տրակերս	819 500	
138	Կրոնշտեյն		
139	Ձախ կամ աջ հորակալ		
140	Ձախ կամ աջ հորակալի փոշեխնկոց		
141	Անվակոնդ		
142	Անվակոնդի խցով		
143	Անվակոնդի մերթին առանցքակալ		

144	Անվանուղի արտաքին առանցքակալ	
145	Հետևի անվանուղի ներքին առանցքակալ	
146	Հետևի անվանուղի արտաքին առանցքակալ	
147	Ձախ կամ աջ հորակապի խցուկ	
148	Հարվածամեղմիչի թասակ	
149	Չսպանակ	
150	Սոջևի հարվածամեղմիչ	
151	Հարվածամեղմիչի փոշերկիւոց	
152	Հարվածամեղմիչի փուն	
153	Ներքևի լծակ	
154	Ներքևի լծակի փուն	
155	Վերևի լծակ	
156	Վերևի լծակի փուն	
157	Գոյե հորակապ	
158	Սոջևի կայունարար	
159	Սոջևի կայունարարի փուն	
160	Սոջևի կայունարարի առջևի փուն	
161	Հետևի զսպանակ	
162	Հետևի ցնցամեղմիչ	
163	Հետևի մետաղաձուր (շտանգա)	
164	Հետևի մետաղաձուր (շտանգա) փուն	
165	Հետևի անկրնագծային լծակ	
166	Անկրնագծային լծակի փուն	
167	Չսպակ (ռնստղա)	
168	Չսպակի փուն	
169	Չսպակի միջարկիլ	
170	Չսպակի բռնիչ	
171	Սք կամ ճախ ձգան	
172	Ծայրակալ	
173	Ցան մեջտեղի	
174	Անվահեճ	385 000
	8. Ղեկային մեխանիզմ	
175	Ղեկային կայուն	
176	Ղեկային կայունի առանցքակալ	
177	Ղեկային կայունի խցուկ	
178	Հորտոմետարար	
179	Հորտոմետարարի փուկ	
180	Հորտոմետարարի վերամորթումն կոմպլեկտ	
181	Հորտոմետարարի պոմպ	
182	Հորտոմետարարի պոմպի վերամորթումն կոմպլեկտ	
183	Ղեկային ձուր	

184	Ղեկային ծոփի ծախսակալ		
185	Հիրուսմեղարարի յուղ, 1 լիտր		7 700
186	Ճոճանակ		
187	Ճոճանակի վրան		
	9.Արգելակային համակարգ		
188	Գլխ. գլան		
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		
190	Վակումնային ուժեղարար		
191	Բանվ. գլան		
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ		
193	Արգելակային փոխարակ		
194	Ստապորոսի ուղղորդիչ		
195	Ստապորոսի սունժետ		
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ		41 800
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ		30 800
198	Իստևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ		-
199	Առջևի արգելակային սկավառակ		93 500
200	Հետևի արգելակային սկավառակ		82 500
201	Ձեռքի արգելակային ճուպան		-
202	ABS-ի տվիչ		9 900
203	Արգելակային հերուկ, 800գրամ		9 900
204	Արգելակային հերուկ, 800գրամ		
205	Ձեռքի արգելակային ճուպան		
	9. Էլեկտրաաարքավորում		
206	Գնճերատոր		
207	Գնճերատորի դիոդային կամրջակ		
208	Գնճերատորի ռեկ		
209	Գնճերատորի արանցքակալ		
210	Ստապորոս		
211	Ստապորոսի ռեկ		
212	Ստապորոսի ածուխ		
213	Բննորոգ		
214	Ստապորոսի կցորդիչ (ավտոմատ)		
215	Առջևի լավտոր		
216	Առջևի լավտորիչ		
217	Հետևի լավտոր		
218	Հետևի լավտորիչ		
219	Արգելակային լավտոր		
220	Լանայ		
221	Էլեկտրական անջատիչ		
222	Էլեկտրական տվիչ		

223	Էլեկտրական չափիչ սարք
224	Քննման կողմեր
225	Էլեկտրաարևրերի գլխավոր խումբ
226	Էլեկտրաարևրերի նրկորդային խումբ
227	Վատոցբյին լարերի խումբ
228	Վատոցբի մոմի ծայրակալ
229	Վազբայսպի
230	Վազբայսպիի ճուպան
231	Արագասպի
232	Ազդանշան
233	Ապակեվացիչ
234	Ապակեվացիչի շարժիչ
235	Դռների կենտրոնական փական
236	Ազդանշանային հանակարգ
237	Մագնիտոլա
238	Էլեկտրատարածիչ
239	Էլեկտրատարածիչի շարժիչ
240	Ներկալուծիչ, օժանդակ նյութեր գին 10/մ վերանորոգման համար

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
 ՀՎՀՀ 00008519

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011020089



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
 ք. Երևան, Բալրոնի փող. 3
 ՀՎՀՀ 01557589

Ամերիկաբանկ ՓԲԸ
 Հ/Հ 1570003667300100

գլխավոր տնօրեն՝
 Վահե Գզրարյան



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՍԱ դասակարգման (CPY)	անվանումը	մոկիդուս	մոկիստգլի	տմոյ	Նվախո	ոկմոյ	ոկիս	ոկիս	ոստոսո	մզմզոտոգո	մզմզոտիս	մզմզոտիզն	Ընդամենը
1	50111130/1	Մեքենաների և սարգավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /425/	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000	600000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամսական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
 ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
 ՀՎՀՀ 00008519
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011020089

ՀՀ ԱԺ աշխատակազմի
 ղեկավար – գլխավոր քարտուղար՝
 Տիգրան Գալստյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
 ք. Երևան, Բայրոնի փող. 3
 ՀՎՀՀ 01557589
 Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ 1570003667300100

գլխավոր տնօրեն՝
 Վահրժ Գրաթյան



Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն